

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Բացառիկ է բանաստեղծության գերը Իսահակյանի ստեղծագործությունների համակարգում: Այստեղ իրապես ի սկզբանե եղել է բանաստեղծությունը: Իսահակյանը ծնվել է բանաստեղծ, նա բանաստեղծություններ է զրկել զրաճանաչմանը զուգընթաց: Գրական գործը նրա համար առաջին հերթին նշանակել է բանաստեղծություններ արարել: Հիրավի, նա մտածել է բանաստեղծությամբ, ճանաչել է աշխարհը բանաստեղծությամբ, արտահայտել է իրեն բանաստեղծությամբ:

Նրա գրական հանճարը առաջին հերթին բանաստեղծության մեջ է: Եվ հենց բանաստեղծությամբ նա գրավեց իր ժողովրդի սիրտը: Բանաստեղծությունը առաջնային, իշխող գեր ունի Իսահակյանի ստեղծագործության համակարգում:

Գուցե համարվի, թե Իսահակյանը բանաստեղծություն քիչ է գրել (նրանց համահավաքը կկազմի երկու հատոր), բայց այսպես է ճշմարիտ մեծերի մոտ՝ Շեքսպիր, Բայրոն, Բյորնս, Պեսորարքա, Գյոթե, Հայնե, Պուշկին, Լերմոնտով, Տյուստև, Քուլչակ, Սայաթ - Նովա, Թումանյան: Նրանց բանաստեղծությունների հավաքածուները նույնպես կկազմեն մեկ կամ երկու հատոր: Եվ երբ մտաբերում ենք այն իստապահանջությունը, այն պատասխանատվությունը, որ ունեցել է Իսահակյանը իր քնարերգության յուրաքանչյուր երկի հանգեպ, կարող ենք վստահ ասել, որ նա բնավ քիչ չի գրել:

Իսահակյանի պոեզիան մի զարմանալի օրինաչափություն է վեր հանում, ինչքան վաղ է հասունացել բանաստեղծը, ինչքան վաղ է ըմբռնել այս աշխարհի էությունը, մարդկային կյանքի անցողիկության գաղափարը: Մինչև իր առաջին տպագիր բանաստեղծությունը՝ «Ծաղիկ էի նորաբողբոջ...», նա 7-8 տարի գրել է, նույնիսկ գրել է չափածո շարքեր՝ «Թիթև-մտքեր», «Mozaik», «Յոթ օր ապատում, յոթ օր անապատում» և այլն: Եվ սակայն ամենավաղ շրջանի երկերից (մինչև «Ծաղիկ էի նորաբողբոջ...») նա տպագրության է հանձնել ոչ ավել, քան մեկ տասնյակ բանաստեղծություն: Կարգում ես 16-17 տարեկանում գրած նրա բանաստեղծությունները և խորհում, մի՞թե սրանք վաղ պատանեկան շրջանի գործեր են: Վերհիշենք սոսկ անունները՝ «Ցաված սիրտս երգեր հյուսեց...», «Անհուն եթերից, աստղիկ լուսափայլ...», «Ես ձերացա... մի զարմանար...», «Մի՞թե պիտի թողնիս, թողնիս...», «Ա՛խ, ուռենի՛, վշտիս ընկեր...», «Դա՛րձրս լացեք, սարի սըմբուկ...», «Տիեզերքի պերճ հյուսվածքն եմ...»:

Մինչև առաջին գրքի՝ «Երգեր և վերքերի» լույս ընծայումը, Իսահակյանը սկսած 1892 թվականից պարբերաբար հանդես է եկել հայ մամուլի էջերում: Իսահակյանի առաջին տպագիր երկը՝ «Նվեր XX» («Ծաղիկ էի

նորաբողբոջ...»), ազգային ոճով, դասական պոեզիայի օրենքներով գրված մի լանաստեղծություն է: Եվ այս երկու հատկանիշները՝ ազգային ոճ և դասականություն, օրինաչափ են դառնում Իսահակյանի ողջ բանաստեղծական արվեստի համար: Թիֆլիսյան երկու հայ պարբերականները՝ «Տարազ» և «Աղբյուր», սիրով հյուրընկալում են պատանի ալեքսանդրապոլյուն, սակայն նրա երկերը տպագրվում են և՛ Սանկտ-Պետերբուրգում («Արարա» գրական տարեգիրք), և՛ Վիեննայում («Հանդես ամսօրյա»): Մինչև «Երգեր ու վերքեր» գրքի երևան դալը, Իսահակյանը հայ պարբերականներում 37 բանաստեղծություն և լեզենդ է հրատարակել: Եվ այս գործերի մեջ այնպիսի նշանավոր բանաստեղծություններ, ինչպես՝ «Մայրիկիս», «Բինդյոլ» («Շընկընկալով հովն է փչում...»), «Տիեզերքի պերճ հյուսվածքն եմ...», «Օխտը սարով հեռու քեզնից...», «Իմ փերին», «Դա՛րըրս լայքք, սարի սրմբուլ...», «Մաճկալ ես, բեզարած ես...»:

18 տարեկան հասակում դրված «Մայրիկիս» բանաստեղծությունը հենց առաջին տողից մխրճվում է հայ մարդու հոգեկան աշխարհը.

Հայրենիքես հեռացել եմ,
 Խեղճ պանդուխտ եմ, տուն չունիմ,
 Աղիզ մորես բաժանվել եմ,
 Տըխուր – սըբառում, քուն չունիմ...¹

Այս երկը տարածվեց բովանդակ հայություն մեջ՝ ազգային դառն ճակատագրի այսպիսի բացառիկ զգացողություն և միաժամանակ անհուն սև մոր հանդեպ մի կերպար, որը վերածում – դառնում է հայրենիքի ընդհանրական կերպար.

Ա՛խ, քո տեսքին, անուշ լեզվին
 Կարոտցել եմ, մայրի՛կ ջան.
 Երնե՛կ, երնե՛կ, երազ լինիմ,
 Թըռնիմ մոտորդ, մայրի՛կ ջան...

Եվ պոետական արվեստի թարմ ու ինքնատիպ շնչով, ներքին մի ա-նորսալի դրամատիզմով հագեցած քնարերգության իրապես անհասանելի մակարդակ.

Հավք ու հովեր եկան կըշտիս,
 Անձեն գիպան ու անցան.
 Պապակ - սըրտիս, փափազ - սըրտիս
 Անխոս գիպան ու անցա՛ն:

Արվեստը, մանավանդ բանաստեղծական արվեստը առանց կախարդանքի շողքի պարզ ու միամիտ բնագավառ կլիներ, կախարդանքը, պատկերայնությունն է նրան բարձրացնում ու վսեմացնում: Այս բնույթի երկ է մեծ սիրերգակի առաջին, «Հեքիաթային» տաղերից մեկը՝ «Իմ փերին».

- Ո՞վ է անգորր, լուռ գիշերով
 Մենությունըս խռովում.
 Շուշան – կրճքով, լույս թևերով
 Նիրհած գետը վրգովում:

¹ Տեքստում բանաստեղծությունները մեջ են բերվում անմիջական տպագիր սկզբնաղբյուրից՝ Իսահակյանի ժողովածուներից և մամուլից պահպանելով անփոփոխ այդ առաջին տպագիր բնագրի պատկերը:

Ո՞վ է հագսձ լուսնի շողեր՝
Շքեղ կանգնում առաջիս.
Սև մաղերին դոհար - ցողեր՝
Հուր շշնջում ականջիս:

Ո՞վ է ծագող լույսերի հետ
Ծաղիկները համբուրում.
Երազի պես ցնդում անհետ
Մշուշային փրփուրում...

Դժվար է որոշել, գեղանկարչական պատկերն է այստեղ ավելի առաջնային, թե՞ հնչյունայինը՝ խոսքը, դո՛ւլյնը, թե՞ մեղեդին, սա իրապես արվեստների մի սինթեզ է՝ համադրված բառի մեջ:

Եվ սակայն Իսահակյանին բացառիկ ճանաչում բերեցին ոչ միայն մամուլի տպագրությունները, այլև առաջին գրքի հրատարակությունը:

Ինչպես մարդիկ, այնպես և գրքերն ունեն իրենց ուրույն ճակատագրերը: Հայ գրականության պատմության մեջ այդպիսի գիրք դարձավ Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Երգեր ու վերքերը»: Արդյոք կխորհե՞ր այնքան դրամատիկ տպագրիչ Գևորգ Սանոյանցը, որ իր համեստ տպարանում հրատարակված ընդամենը 64 էջանոց գիրքը պիտի առհավետ իր տեղը գրավեր հայ գրականության դարավոր քարտեզի վրա:

Երբ Ավետիք Իսահակյանը մուտք գործեց գրական ասպարեզ՝ 1890 – 1895 թթ., հայ պոեզիան որոշ իմաստով լճացում էր ապրում: Երկնակամարում թևածում էին Ռ. Պատկանյանի, Ս. Շահազիզի, Ղ. Աղայանի, Հովհ. Հովհաննիսյանի, Ալ. Ծատուրյանի անունները: Նրանցից յուրաքանչյուրը մեծ դեր է խաղացել հայ սյուեզիայի զարգացման գործում, սակայն նրանց ստեղծագործությունն ինչ-որ չափով արդեն կտրված էր ժողովրդի կյանքից, հայ իրականությունից. դա բացատրվում է այդ հեղինակների թե՛ ասելիքի ուղղվածությամբ, հայացքների որոշակի պահպանողականությամբ և թե՛ նրանց երկերի լեզվի հնարույրությամբ, գրաբարյան ձևերի հազեցվածությամբ և որոշակի խրթինությամբ: Նոր ժամանակները, նոր դարաշրջանը պահանջում էին նոր գաղափարներ: Հովհաննես Թումանյանն ու Ավետիք Իսահակյանն էին, որ իրենց գաղափարներով և լեզվական մտածողությամբ XIX դ. վերջին կատարեցին արմատական վերափոխում նոր շրջանի հայ գրականության պատմության մեջ՝ մի գործընթաց, որին կարոտ էր հայ ընթերցողը: Նրանց ստեղծագործությունը վիթխարի նշանակություն ունեցավ ժողովրդի գիտակցության ձևավորման ավյալ փուլում: Նրանք հաղթահարեցին կլասիցիզմի, գրքաբույր գրաբարի ճոռոմ ու երկարաչուն ձևերը, վերականգնելով հայ միջնադարյան պոեզիայի քնարական էությունը՝ պատկերավորությունն ու հնչեղությունը: Մոտեցան հայ ժողովրդի հոգևոր ակունքներին, բացահայտեցին հայ արվեստի ազգային էությունը՝ կենդանի կամուրջ գցելով միջնադարյան պոեզիայի ավանդների և մեր ժամանակների միջև:

Իսահակյանի դերը նորագույն շրջանի հայ սյուրռեալի մեջ հրաշալի բնութագրել է Դերենիկ Դեմիրճյանը. «ժողովրդական երգը և դրա ոգին օգի մեջ էր: Հարկավոր էր միայն վճռական ձայնարկող մեկը, որ բարձր հնչեցներ այն և ժողովուրդը բերեր լիրիկական գրականության մեջ: Եվ ահա հանդես եկավ Ավետիք Իսահակյանը, հնչեցրեց լիաձայն ժողովրդական ոգով գրած երգը և իր հետ երգել տվեց ողջ հայ ժողովուրդը: Դա մի նոր փարուն էր հայ սյուրռեալի մեջ: Ավ. Իսահակյանը ստեղծեց իր լիաձայն ժողովրդական բանաստեղծությունը, որի կրակների մեջ այրվեց, մոխրացավ նախորդ շրջանի գրաբարախառն, անկենդան տոնգրիան»²:

Իսահակյանը երևան եկավ հայ ընթերցողին առաջին հերթին «Երգեր ու վերքերով»: Նրա անդրանիկ ժողովածուն ինչքան էլ իր էությունը կապված էր հայ բանահյուսության և միջնադարյան սյուրռեալի հետ, սակայն իր անմիջականությամբ, զգացմունքի զորությամբ ու զուլայությունամբ, բանաստեղծական արվեստի կատարելությամբ, առելիքի թարմությամբ ու խոհական ուղղվածությամբ նոր խոսք էր հայ քնարերգության բազմադարյան պատմության մեջ: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ Իսահակյանի չափածոյի արվեստի հիմնական մոտիվները դրսևորվեցին և ի հայտ եկան «Երգեր ու վերքերով»: Այս գիրքը, պատահական չէ, որ ունեցավ բացառիկ ընդունելություն ընթերցողի կողմից:

Ի՞նչ սյուրռեալի հայ ընթերցողին Իսահակյանի «Երգերն ու վերքերը», առաջին հերթին այն գիտակցությունը, որ կենդանի ու ճշմարիտ բանաստեղծությունը կարող է օգնել մարդուն ասլել, այն կոչված է կյանքի, հանձնված է թղթին, որպեսզի թեթևացնի մարդու երկրային կյանքի տառապանքները, հոգսերը: Խորապես բնորոշ է և գրքի վերնագիրը՝ «Երգեր ու վերքեր»: Երդս սպեղանի է ժողովրդի վերքին...

Գրքում բանաստեղծությունները ներկայացված են մի քանի շարքերով «Սիրո հուշերից», «Ալագյազի մանիններից» (սյուրռեալ նախնական մտահղացմամբ եղել է բանաստեղծությունների շարք), «Աստղիկ ու ծաղիկ», «Իմ օրագրից», «Դատըրկյուն աշուգի խաղերից ու բայաթիներից»: Սակայն Իսահակյանի մոտ բանաստեղծությունների բաժանումն ըստ շարքերի ավելի շուտ սլայմանական բնույթ է կրում: Այն չունի էական նշանակություն՝ կապված լինելով բուն ասելիքի հետ, բնութագրելով այն, ինչպես ասենք, Տերյանի կամ Վարուժանի մոտ: Հենց «Երգեր ու վերքերից» հստակ երևում է, որ շարքերն ունեն անսքող ընդհանրություն, նրանք ասես մեկ միասնական պատումի բնական մասերն են, միմյանց հետ շաղկապված և սլայմանավորված: Այնպես որ մենք ավելի հակված ենք գիտելու «Երգեր ու վերքերը» որպես մեկ միասնություն, ռոմանտիկական սյուրռեալի մեկ զորեղ պոռթկում, ուր արտահայտված են Իսահակյանի արվեստին հատուկ այն հիմնորոշ մոտիվները, որոնք հետագայում հատկանշական եղան նրա սյուրռեալի ճակատագրի համար:

Ամենարևորոշը, առաջնայինը «Երգեր ու վերքերի» համար սիրո մոտիվն է: Եվ դա բնական է, քանզի քնարական խառնվածքի տեր հեղինակին այդ հասակում ուրիշ մոտիվ չէր էլ կարող ավելի հուզել:

² Դ. Դեմիրճյան. Երկու խոսք. «Ավ. Իսահակյան. Երգեր և ռոմանսներ» գրքի առաջաբան. Երևան, 1955, էջ 5:

Այնպես, ինչպես Իսահակյանը ներկայացրեց սերն իր անդրանիկ գրքում՝ Հայ պոեզիայում հիրավի վերջին անգամ երգել են Քուչակն ու Սայաթ-Նովան: Եվ ահա անմիջական կամուրջ է գցվում պատանի գյուճերեցու և «Սիրո գինը սերն է» խոսքերը հոչակած հանճարեղ աշուղի միջև: Եվ սակայն զգացմունքի անմիջականության և կրքի շիկացման կողքին այստեղ առկա է թեմայի վսեմացումը և խորապես դրամատիկ ուղղվածությունը:

Պարզ, հովվերգական սիրո նկարագրությունն չէ միայն Իսահակյանի սիրերգությունը, այլ նաև սիմվոլիկ ու անընթաց պատրանք կամ ոչ երկրային երազանք, բացարձակապես զուրկ վավաչոտ երանգներից և պատկերներից, մեկ խոսքով այն զգացմունքը, որը իսկական քնարական պոեզիայի անհազ ակունքն ու մշտավառ փարոսն է եղել դարեր ի վեր: «Երգեր ու վերքերում» ծնունդ առած «Ծաղիկ էի նորաբողբոջ...», «Բինգյոլ» («Շընկընկալով հովն է փչում...»), «էս ճամփեն ոլոր – մոլոր...», «Օխտը սարով հեռու՛ է քեզնից...», «Արևն իջավ սարի գըլխուն...», «Մաճկալ ես, բեղարած ես...», «Դա՛րդըս լացեք, սարի սըմբուլ...», «Սև աչերեն շա՛տ վախեցի՛ր...» և դրանց գումարած «Ալագյազի մանիներից» շարքի բանաստեղծությունները, գրվելու օրից դարձել են Հայ մարդու կյանքի ամենօրյա ուղեկիցները:

«Երգեր ու վերքերի» գերիշխող թեման սիրային քնարերգությունն է: Այդ բանաստեղծությունները ոչ թե վերացական սիրո խոստովանություն են, ռոմանտիկ ապրումների ընդհանուր տարերք, այլ ունեն իրենց ստույգ հասցեատերը, այն է՝ Իսահակյանի կյանքի մեծ և դրամատիկ սիրո հերոսուհին՝ Շուշանիկ Մատակյանը: Շուշանիկին նվիրված Իսահակյանի բանաստեղծությունները կազմում են Հայ սիրային պոեզիայի ոսկե ֆոնդը: Սիրո այս պատմությունը Հայ դրականության մեջ համարժեք է իտալական պոեզիայում Դանթեի և Բեատրիչեի կամ Պետրարքայի և Լաուրայի սիրո պատմություններին: Համաշխարհային սիրային պոեզիայի հեռուհեռուների շարքում ընդմիջտ իր տեղն ունի Շուշանիկը: Եվ այս պատմության արձագանքներն առաջին անգամ արտաբերվեցին «Երգեր ու վերքերում»: Երբ լույս տեսավ «Երգեր ու վերքերը», Շուշանիկն արդեն կորսված էր. 1893 թ. Իսահակյանը մեկնում է ուսման Գերմանիա, քիչ անց Շուշանիկը ուխտադրժորեն ամուսնանում է ուրիշի հետ: Պաշտած էակի այս քայլը մի տևական շրջան մեծ բեկում է առաջ բերում երիտասարդ բանաստեղծի հոգում, և Իսահակյանի սիրերգության ընդհանուր տրամադրությունը, հույզերն ու ապրումները երկար տարիներ պայմանավորված էին այս մեծ և կորսված սիրո պատմությամբ:

«Երգեր ու վերքեր» գրքի հաջորդ էական մոտիվը մայրական սիրո մոտիվն է: Այս թեմայով գրված գործերը դեռևս շատ չէին գրքում, բայց եղածն արդեն թույլ է տալիս դասել Իսահակյանին այդ մշտնջենական զգացումի լավագույն երգիչների շարքը: Եվ այս մոտիվը ճակատագրի բերումով կապվում է պանդխտության թեմայի հետ: Մոր կարոտը պանդուխտ որդու հանդեպ, մոր աղոթքը, մոր օրհնանքը, մայրական զգացումի առաքինությունն ու վեհությունը և իր հերթին Իսահակյանի քնարական հերոսի պաշտամունքի հասնող սերը մոր հանդեպ՝ այս ամենը բնորոշում

են բանաստեղծի ստեղծագործությունն առանցքային մոտիվներից մեկի էությունը:

Մայրական սիրո մոտիվներով զրված ստեղծագործություններից է «Մայրիկիս» («Հայրենիքես հեռացել եմ...») բանաստեղծությունը՝ մեկը Իսահակյանի պոեզիայի գլուխգործոցներից:

Այստեղ ամբողջությամբ արտահայտված է «Երգեր ու վերքերի» հեղինակի թե՛ էությունը, թե՛ գրելաձևը, թե՛ ասելիքը: Այստեղ գուցե առաջին անգամ (բանաստեղծությունը գրված է 1893թ.) երևաց Իսահակյանի բանաստեղծական տաղանդի ուժը, նրա հուզական աշխարհի խորությունը, անհուն մարգասիրությունը, բնությունն ու իրերը մարդկայնացնելու կարողությունը: Ինչպես ասում են արարները՝ նժույգի քայլքից կարելի է որոշել նրա ազնվացեղությունը. այս բանաստեղծությամբ կարելի է որոշել Իսահակյանի պոեզիայի ինչ լինելը: «Մայրիկիս» բանաստեղծությամբ լավագույնս երևան եկավ քնարականության այն որակը, որը այսուհետ պետք է կոչել հայ քնարիկության իսահակյանական որակ:

«Երգեր ու վերքերում» համարձակ փորձ է արվում ըմբռնել տիեզերքի առևտնավածը, ընդգրկել նրա խորհուրդներն ու խորքերը, գիտել այն որպես աշխարհի ու մարդու երազանքների, ձգտումների մի կիզակետ՝ հիմքը ամենի, ամեն ինչի: Երկրասարգ Իսահակյանն իր անթարթ հայացքն ուղղում է տիեզերքին, փորձում նրա հզորության կողքին հաստատել և մարդ արարածի ինքնությունն ու իրավունքը. «Տիեզերքի պերճ հյուսվածքն եմ, Իմ մեջ երկինքն է երգում...»: Մարդն ու տիեզերքը, տիեզերքը որպես մարդկային կենսական ու ստեղծագործ ուժերի հավերժ ակունք, տիեզերքը որպես անսահմանության ու հավիտենության խորհրդանիշ: Տիեզերքի թեման Իսահակյանի հետագա գործերում ստացավ հուժկու զարկացում, դարձավ նրա խորհրդածությունների հիմնական առանցքներից մեկը և դասեց հայ բանաստեղծին տիեզերականի լավագույն երգիչների շարքը՝ համաշխարհային պոեզիայի մեջ:

Ու թեև սերն ու հավերժի ձգտումը դերիշխում են «Երգեր ու վերքերում», սակայն մեկ այլ մոտիվ նույնպես արդեն բախում է նրա քնարական աշխարհի դուռը՝ ավատության ու հերոս անհատի մոտիվը: Ծիչտ է, այն դեռ չունեն իր ուղ խորությունն ու փիլիսոփայական ընդգրկումը, սակայն սկիզբն արդեն դրված էր («Սիրտ իմ, սպասի՛ր, գուցե արշալույս...», «Փչե՛ - պսակը ճակտիս կըղնեմ...», «Հեռո՛ւ ավերում միտքըս թափառեց...», «...Բայց ես ոգի եմ...», «Ընկե՛ր, միչտ հառա՛ջ...»): Այս բանաստեղծությունները ոչ թե քնարաչունչ սիրերգակի, այլ աշխարհը «նորոգ հույսի տակ» վերածեղել ցանկացողի, ազատության ջատագովի երկեր են:

Եվս երկու բնույթի բանաստեղծություններ կուզենայինք առանձնացնել «Երգեր ու վերքերում», որոնք թերևս կրում են այն առաջնային սաղմերը, որ հետագայում զորեղ ընձյուղներ պիտի նետեն Իսահակյանի հայրենասիրական պոեզիայի հենքին: Առաջինը՝ «Մաճկալ ես, բեզարած ես...» բանաստեղծությունն է, ուր հայրենասիրության գաղափարն արտահայտված է մի եզակի հնարանքով՝ ուսմիկ մարդու (հայրենիքի հիմքերից հիմքի) աշխատանքի և ազգային կենցաղի բանաստեղծացմամբ: Երկրորդը՝

Իսահակյանի Ֆիդայական պոեզիայի մեծ ու գորեղ սրմատի նախաշավիղ երկերը («Օխարը սարով հեռո՛ւ քեզնից...» և «Արևն իջավ սարի գլխուն...»): Այստեղ հիրավի առաջին անգամ մեր դասական պոեզիայում երգվում է Ֆիդայու սերը. երբ սիրատենչ երգի տողերի մեջ գծագրվում է հերոսին սպասող հայ կնոջ առաքինի կերպարը, գծագրվում է նրա դառը ճակատագիրը:

«Երգեր ու վերքեր» գրքում զարմանալի ամբողջությամբ երևաց ինքը՝ հեղինակը, այս դիրքն ասես մեկեն հայտնի է դարձնում Իսահակյանի մարդկային խառնվածքը, նրա անհատականությունը: Այն կարելի է համարել հեղինակի և նրա քնարական հերոսի միաձուլման դասական օրինակ: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ առաջին գրքում տպագրված համարյա բոլոր բանաստեղծությունները հետագա տարիներին գետեղվեցին Իսահակյանի հատորներում, պատվով բռնեցին ժամանակի փորձությունը: «Երգեր ու վերքեր» երևան բերեց Իսահակյանի քնարերգությունն ամբողջ աշխարհում մոտիվները, որոնց շուրջ պիտի ձևավորվեին հետագա տարիների չափածո գործերը: «Երգեր ու վերքեր» վերնադիրը հավանաբար շատ էր դուր եկել Իսահակյանին, որ 1902 թ. Բաքվում (տպարան՝ Ն.Հ. Նրևանցյանի) հրատարակած իր երկրորդ գիրքը նա անվանեց «Հին - նոր երգ ու վերքերից»: Այս գիրքը ծավալով զգալի փոքր էր առաջինից՝ ընդամենը 24 էջ: Մի շարք երկեր նոր ժողովածուում փոխ էին առնված անդրանիկ հատորից, սակայն այս գրքում առաջին անգամ հրատարակվեցին այնպիսի կատարյալ բանաստեղծություններ, ինչպես՝ «Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ...», «Սիրեցի, յարըս տարան...», «Աև - մութ ամպեր ճակտիդ դիզվան...», «Տիեզերական Զանգ», «Զմեռն անցավ, եկավ գարուն...», «Շղարչ - ամպերն երկինքն առան...»:

Ի սարբերություն «Երգեր ու վերքերի» այստեղ բանաստեղծությունները առանձին շարքերով չէին տրված: Այստեղ ասես ավելի կատարելագործված էին Տիեզերքի առեղծվածի վերաբերյալ բանաստեղծի խորհրդածությունները՝ «Տիեզերական Զանգ» բանաստեղծությունը, ուր ի դեպ առաջին և վերջին անգամ Իսահակյանն իր մասին ասում է. «Ես մարգարե եմ...»: Եվ հաջորդը՝ սոցիալական արդարության խնդիրը, որը ժողովրդական բանաստեղծի երկերի ներկայանակում չպետք է անսպասելի թեմա համարվեր: Հիշենք Ն.Աղբալյանի խոսքերը «Երգեր ու վերքեր» գրքի կապակցությունում. «...եթե դուք զգում եք այն, ինչ կզգար ժողովրդի մարդը, ապա դուք ժողովրդի պես եք զգում և ուրեմն ձեր երգերը ժողովրդական են»:

«Հին-նոր երգ ու վերքերից» դիրքը եկավ ապացուցելու, որ «Երգեր ու վերքերի» հաջողությունը ոչ թե անցողիկ, այլ մշտական բնույթ ունի, որ առկա է ոչ միայն բացառիկ կատարելություն, այլև քնարական հերոսի կերպարի բյուրեղացում ու բանաստեղծական արվեստի հետագա զարգացում: Ամեն ինչից երևում էր, որ երիտասարդ Իսահակյանի քնարը ծաղկում էր ապրում:

Դարավերջին Արևմտահայաստանում ծավալված սլամական իրադարձությունների ազդեցություն տակ Իսահակյանը գրում է «Հայդուկի երգեր» հայրենասիրական շարքի գործերը: Եվ սկսած 1899 թ.՝ ժնկում դաշ-

նակցութեան կենտրոնական պաշտոնաթերթ «Դրոշակը» տպագրում է այդ շարքի երկերը «Հայ - գուսան» ծածկանունով: Իսահակյանն այդ անունը ընտրել էր, քանի որ դա խոստուն անուն էր և մեկ անգամ ևս ընդգծում էր նրա հոգևոր կապը գուսանական արվեստի հետ, քանզի ողջ շարքը կապված է Հայ բանահյուսութեան ավանդույթների հետ: Մեկը մյուսի ետևից «Դրոշակի» էջերում լույս տեսան այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են՝ «Էն արծի՛վն էր թըռավ, դընաց...» (1896), «Ազիզ մերիկ, քեզի թողի...» (1898), «Լուռ դիչերին մտքիս դիմաց...» (1898), «Գըլգըլալով ջուրն է իջնում...» (1900), «Հազար բարով, հարար սարեր...» (1900), «Ինձ տեղ տվեք, Սիփան սարե՛ր...», «Սուրբ հայրենիքս երգել կուզեի...» և այլն:

«Հայդուկի երգերի» տպագրմանը գործուն մասնակցություն է բերել «Դրոշակի» խմբագիր, ՀՅԴ-ի հիմնադիր Քրիստափոր Միքայելյանը: Պահպանվել է Քրիստափոր Միքայելյանի մի արժեքավոր նամակը՝ գրված 25-ամյա բանաստեղծին ժնկից 1900 թ. նոյեմբերի 26-ին. «Համարը արդեն շարվում է, բայց քեղանից դեռ խաբար չունեմ: Հույս ունեմ սակայն ոչ ուշ, քան մի շաբաթ Հայ-գուսանի այրվող սրտից հրեղեն խոսքերի նոր հնչյուններ լսել»:

«Դրոշակի» յուրաքանչյուր համար ձեռագիր օրինակների միջոցով Հայաստանում և Կովկասում լայն տարածում էր ստանում, իսկ «Հայ-գուսանի» երկերը դառնում էին ժողովրդի սեփականությունը: Նրանք հասնում էին և Ավետյաց երկիր, ուժ ու եռանդ հաղորդում այն հերոսներին, որոնք բանաստեղծությունների իսկական հասցեատերերն էին: Նրանցից շատերը դեռ չէին լսել Ավետիք Իսահակյանի անունը, բայց դիտեին «Հայդուկի երգերի» հեղինակ Հայ - գուսանին:

Ֆիդայական պայքարը, նրա ողին, հույսն ու տառապանքը պիտի հավետ ապրեին Իսահակյանի երկերում, պիտի ստանային իրենց գեղարվեստական մարմնավորումը, քանզի XIX դ. վերջի ու XX դ. սկզբի Հայ պոեզիայի սլաոմական հատվածում չկար մեկ այլ հեղինակ, որն ի վիճակի լիներ դառնալ հայդուկային շարժման երգիչը: Նա այդ իրավունքը ձեռք էր բերել իր ճակատագրի տատասկներով, իր բանաստեղծական հանճարով և իր երգերի համաժողովրդական ճանաչումով: Ուստի Իսահակյանը դարձավ Ֆիդայական սլաքարի առաջին երգիչը Հայ պոեզիայի պատմության մեջ:

Այս շարքը առավել թանկ ու անփոխարինելի էր, որովհետև այն ստեղծվել էր ճիշտ ժամանակին, սլաոկերն էր այն իրականության, որն այդ սլահին բախում էր սլատմության դուռը, դա անկախության պայքարի ոչ թե հետադա իմաստավորումն էր կամ նրա արձագանքը, այլ շարժման կենդանի արտացոլումը: Նա ընթերցողին վարակում էր սուրբ մարտի առաքինությամբ, կռվի էր տանում: Այս հանդամանքը շարքին հաղորդում է հեղափոխական հնչեղություն և արդիական իմաստ:

Շնորհիվ Իսահակյանի՝ Ֆիդայական շարժումը մուտք դործեց պոեզիա, մեր պոեզիայի դարավոր հայրենասիրական հունին նոր ավյուն ներարկեց, իմաստավորեց ազգային անկախության պայքարը և դրանով իսկ նոր էջ բացեց Հայ բանաստեղծության պատմության մեջ: Այնպիսի երկեր, ինչպես «Է՛յ, ջան հայրենիք, ինչքա՛ն սիրուն ես...», «Սալնո ձորերում, կըռ-

վի ձորերում...», «Արագին», «Ազատության Զանգ», «Որսկան ախպե՛ր, սարեն կուդաս...», «Քաջերին», «Մեր ճակատագիրը», «Մասիսի մռայլ, խոժոռ ժայռերի...», դարակազմիկ նշանակություն ունեցան հայ դրականություն համար: Բանաստեղծը աֆորիստիկ տաղանդով, մեկ մետաֆորով արտացոլում է հայրենյաց երկրի համայնապատկերը.

է՛յ, ջան հայրենիք, ինչքա՛ն սիրուն ես,

Սարերըդ կորած երկնի մովի մեջ.

Զրերդ անու՛շ, հովերդ անու՛շ.

Մենակ ըստքըդ արուն – ծովի մեջ...

Այստեղ արտացոլված է ազատության հասնելու ժողովրդի դարավոր երազանքը, որի համար իրենց դեռատի կյանքը զոհեցին հայ հայդուկները՝ լինի Սալնո ձորերում, Մըշո, թե Բասենա դաշտերում...

Սա այն հայդուկն է, որի մասին հերոսի մայրը վշտատոհյոր հարցնում է Որսկան ախպերը. «Որսկան ախպե՛ր, սարեն կուդաս, /Սարի մարալ կրփնտրես. /Ասա՛, յարա՞ք դուն չրտեսար/ Իմ մարալըս, իմ բալես»: Եվ Որսկան ախպերը պատասխանում է. «– Տեսա, քուրի՛կ, դարդոտ բալեդ /Քարն է դըբեր բարձի տեղ. /Անուշ քընով տաք դընդակն է /Կըրծքում դըրկեր յարի տեղ»: Սա XIX դարավերջի հայ երիտասարդի կյանքն է, իրք դեռ սերը չվայելած, հրացանն է դրկում:

«Հայդուկի երգերը» թերևս կարելի է համարել Իսահակյանի պոեզիայի ամենակայուն շարքը, որը հետագայում չփոփոխվեց, չտարրալուծվեց նրա քնարական գործերի ընդհանուր համակարգում, սակայն քաղաքական հանգամանքների բերումով հեղինակը երկար տարիներ հնարավորություն չունեցավ այդ երկերի զգալի մասը հրատարակել հայրենիքում:

Իսահակյանի ժողովածուների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում Բաքվում լույս տեսած «Բանաստեղծություններ» (1903) գիրքը, որը նշանակալից երևույթ էր. Իսահակյանի 15 տարիների ստեղծածի ամփոփումն էր, իրապես պատկառելի մի հատոր:

Գիրքն ուներ ընծայական. «Անդին մորս՝ Ալմաստ Իսահակյանին նվիրում եմ բանաստեղծություններս», և սկսվում էր մորը նվիրված «Գուցե իմ հեծձանք, հառաչք և մըմունջ...» երկով:

«Բանաստեղծությունների» առաջին մասում գետեղված էին խոհափիլիսոփայական՝ «Տիեզերական Զանգ»-ը և «Ես ձեզ ասում եմ կգա Ոգու սով...» պատվիրանը: Ուղիղ մեկ գար է, ինչ հրապարակվել է այս հանձարեղ մարգարեությունը, բայց կարծես երեկ դրված լինի: Բանաստեղծի տաղնապը «Ոգու սովի» արշավանքի վերաբերյալ իրապես ոչ մեր ժամանակի մասին է: Այսպիսին է ճակատագիրը հավերժի ուղեկիցը դարձած ստեղծագործությունների:

«Բանաստեղծությունների» ամենածավալուն, երրորդ բաժինը վերնագրված էր «Երգեր ու վերքեր»: Սա նշանակում էր, որ շարունակվում է անդրանիկ ժողովածուի ասելիքը, մանավանդ որ պահպանված էին նրա ենթախորագրերը:

Նոր գործերում ևս Շուշանիկ Մատակյանը մնում էր Իսահակյանի պոեզիայի հիմնական հերոսուհին, թեկուզ բանաստեղծը խոստովանում է. «Ուրտեղ սիրուն կին կտեսնեմ, կնորանան դարդերս», բայց և նույն բա-

նաստեղծության մեջ կրկին անդրադառնում է իր իդեալին. «Զառ հույսերով, անմահ սիրով ես քեզ խորունկ սիրեցի. /Աստղ ու երկինք-մատաղ սիրտս, ոտներիդ տակ փռեցի. /Սեր չտվիր, ու աշխարհեն սիրտս կտրավ Շուշան ջան»:

Սիրային քնարերգությունը «Բանաստեղծություններ» գրքում ստանում է ավելի համապարփակ իմաստ, այս հավերժական թեման հասցնելով դասական բարձունքների: Իրապես անըմբռնելի, անորսալի մի կայծով է կերտված հավերժական սիրո այս յուրօրինակ մետաֆորը.

Ա՛խ մարալը աղբյուրի մեջ
եղնիկի շուքն է տեսեր. —
Ու ման կուգա էն եղնիկին
Մուրիկ-մուրիկ, զօր գիշեր...

Ա՛խ, եղնիկն էլ երազի մեջ
Մարալի ձենն է առեր. —
Ու ման կուգա էն մարալին
Մուրիկ-մուրիկ, զօր գիշեր...

Սիրո թեման էլ ասլուում է իր ուրույն բնաշրջումը և հաջորդ տարիների գործերում անձնականից անցնում ավելի լայն ընդգրկումների, սիրո հավերժության գաղափարին:

«Բանաստեղծություններ» ժողովածուի երկրորդ մասը կրում է «Ժողովրդական մոտիվներ» խորագիրը, ուր գետեղված էին բանահյուսական ոգով գրված «Մաճկալ ես, բեզարած ես...», «Ա՛խ, մեր սիրտը լիքը գարդ, ցավ...», «Բալես ունի հնդու- մաթա...», «Օխտը սարով հեռու՝ քեղնից...» և առաջին անգամ տպագրվող «Որսկան ախսեր»-ը՝ հայ պոեզիայի անմահ երկերից մեկը, ինչպես նաև «Ալադյազի մանիններից» սլոտական շարքը:

«Բանաստեղծություններ»-ի հեղինակը թե՛ գրքի կառուցվածքով, թե՛ դրա ավանդական խորագրերով ընդգծում է այն հանգամանքը, որ ինքը ոչ թե մի նոր դիրք է գրում, մի նոր սլոտական կառույց է վեր հանում, այլ, ինչպես ոսկերիչը, շարունակում է կատարելագործել իր ստեղծածը, իր հրաշք ժանյակը: Նրա քնարերգությունը այնքան ամբողջական է, միասնական, որ դժվար է այն մասնատել, տարբեր շրջանների բաժանել: Սա կարծես մի վիթխարի սիմֆոնիա է, որ գնալով ավելի հարստանում, ճոխանում ու կատարելագործվում է: Սա բացառիկ ամբողջականություն է, բացառիկ հավատարմություն թե՛ ոճին, թե՛ արվեստի այն բարձունքին, որին հասել էր և մեկ թիզ անգամ էլ ի թշնամ: Եվ սակայն հիշատակածս ոսկերչի նման անընդհատ կատարելագործում էր արածը, քանզի ստեղծված էր հավերժության համար: Այստեղից և բարձրագույն իստապահանջությունը սեփական ստեղծագործության հանդեպ, ինչպես և խորին հարգանքը պոետական արվեստի նկատմամբ:

«Սարի հովի պես ամպերու փեշով...»-ը հենց բանաստեղծական այն ֆենոմենն է, որի մակարդակին հիրավի անհնար է հասնելը.

Սարի հովի պես ամպերու փեշով
Արծըվի թևին գարնեմ ու երթամ.

Ձինջ աղբյուրի սլես դալուկ անտառով

Ձոր տերևները գրկեմ ու երթամ...

Հնարավոր է՞ արդյոք ասել, թե այս «երթը» կապված է այս կամ այն դարաշրջանի, ժամանակաշրջանի հետ, ո՞չ, սա մարդու հավիտյան երթն է, «կյանքի և մահվան» փոխհարաբերությունից հավիտյան օրենքը, որ եղել է ստեղծման օրից և կլինի հավերժ...

Կամ թե հայրենիքի պատկերը, որը ոչ միայն գեղեցիկ բնանկար է՝ ստեղծված գեղանկարչի վառ դուլներով, զարդարուն երանգներով, այլ հայրենի բնությունը խորհրդանշող պատկերների միջոցով հարազատ ժողովրդի հույժյան արտացոլումն է.

Սև - մութ ամպեր ճակտիդ դիզվան,

Դուժման հազար, Այադյա՛գ,

Սրտումս արև չի շողշողում,

Սիրտս է՛լ դուժման, Ալագյա՛գ...

Անանուն երգահանի կողմից երգի վերածված այս երկն ընդմիշտ կապվեց ժողովրդի հոգու հետ: Այսպիսին է այն երկի ճակատագիրը, որը թեև հազարից մեկն է լինում, բայց այդ մեկն արդեն հավիտյան է և հավիտյան իր ժողովրդի հետ է: Այս ճանապարհով է հեղինակի ստեղծածը դառնում նաև ժողովրդի սեփականությունը:

Բայց և այնպես անհատն է ստեղծում «Մաճկալը», «Սալնո ձորերում...»-ը, «Որսկան ախպերը», «է՛յ, ջան հայրենիքը...» հայոց ողբերգական պատմության այս զարմանահարաշ խտացումները: Որքան ծանր է մեր պատմությունը, այնքան ողբերգական հնչեցրանգներով է պատված պոետի խոսքը: Հայոց պատմության էջերն անհնար է անտարբեր կարդալ, դրանք տակն ու վրա են անում ընթերցողի հոգին: Նույնը և Իսահակյանի դործերը. նա թերևս առաջիններից մեկն էր նորագույն շրջանի հայ պոետի անդաստանում, որ կարողացավ այսպիսի կատարելություններ արդի պատմության հերոսական էջը, հայ ազատագրական սլաքարը, Ֆիդայական կռիվը բարձր արվեստի նյութ դարձնել, իսկ բարձր արվեստը դեռևս անտիկ շրջանից հագեցած է ողբերգական տարրերով: Քանզի ողբերգությունը նույնպես պատմության հավերժ ուղեկիցն է, մանավանդ հայոց պատմության:

Եվ սակայն հայրենիքի պատմությունը, մեր՝ ազատամարտի գողգոթան Իսահակյանի աշխարհայացքում ինքնամփոփ հասկացությունն է, ճիշտ է, նա վեր էր ամեն ինչից, նա էր առաջնայինը, սակայն Իսահակյանը նաև աշխարհաքաղաքացի էր: Հոգևորի անէացման, բարոյալքման, նյութապաշտության այն ալիքը, որ դրոհում էր աշխարհի վրա դարասկզբին, նոր՝ «տեխնիկայի դարի» ներխուժմամբ ու հաստատմամբ, Իսահակյանի հոգում առաջ բերեց երիցս ճշմարիտ այն դուշակումը, այն ահագանգը, որ նյութն է արչավում ոգու վրա, և դա միայն սկիզբն էր այդ համընդհանուր չարիքի, հիշենք ժամանակը. գարասկիզբ՝ 1903 թ., ուղիղ 100 տարի է անցել այս մարդարեական կանխագուշակումից, բայց ի՞նչ է, նյութի տեսիլը նահանջե՞ց և չի նահանջի 100 տարի հետո էլ՝ այսպես է մարդը.

Նս ձեզ ասում եմ՝ կրգա ո՞գու սով,

Եվ դուք կըքաղցեք ճոխ սեղանի մոտ,

Կընկնեք մուրալու հափրած որկորով՝

Հրեղեն խոսքի, վեհ խոսքի կարոտ...

Թերևս դարասկզբի Իսահակյանի լավագույն բանաստեղծական ժողովածուն պիտի համարել «Երգեր ու վերքերը» (1908 թվական, Թիֆլիս, ապարան «Հերմես» Ս.Պ.Նզդիգարեանի): Գիրքն այս ամբողջությամբ կազմվել էր հեղինակի կողմից և հրատարակչական տեսակետից նույնպես նրա ճաշակի արգասիքն էր: Հավատարմությունը հիշյալ վերնագրին մեկ անգամ ևս հաստատում է մեր ասածը Իսահակյանի պոեզիայի ամբողջականության, միասնականության մասին:

Սակայն 1898 թվականի «Երգեր ու վերքերից» մինչև 1908 թվականի «Երգեր ու վերքերը» Իսահակյանի բանաստեղծական հունձքը շատ է վտխվել, այն օրըստօրե մշակվել, բարելավվել, հղկվել ու ճոխացել է: Անընդհատ և հանապազօրյա աշխատանք է տարվել, և որքան հարստացել է նոր ասելիքով, այնքան և հղկվել ու բյուրեղացել է հինը՝ նախկինում հրատարակածը: Նոր գիրքը հատկանշվում է պոետական արվեստի կատարելությունը:

«Երգեր ու վերքերի» (1908) լույս տեսնելուց հետո Հայտնի դարձավ մի ճշմարտություն. Իսահակյանը Հայ նոր գրականության մեծագույն սիրերգական է: Գրքում զետեղված սիրային քնարերգության երկերը այդ հավերժական թեմայի այնպիսի թարմ ու ոգեշունչ, «պայծառ թախիծով» պատված մեկնաբանում բերեցին, որակ ստեղծեցին, որը համարվում է ոչ միայն Իսահակյանի, այլև ողջ Հայ բանաստեղծության գորեղ առաջնութայնը քնարերգության այդ ամենանուրբ ու դժվարին բնագավառում: Սիրային պոեզիայի հրաշագործ է Իսահակյանը, նրա զգացմունքը դժվար է պարփակել թեմայի ընդունված շրջանակներում, այն անիմանալի է ու անհասանելի: Սերը մի հազվագյուտ միջոց է՝ ներթափանցելու մարդկային հոգու նվիրական բավիզները, վեր հանելու մարդու և առաջին հերթին իր հեղինակի հոգեկան նկարագիրը: Սիրո տեսանկյունից են գիտվում աշխարհն ու ժամանակը, գնահատվում մարդկային արարքներն ու քայլերը: Եվ ինքնին սերը հավիտյան ոգեշնչման աղբյուր է՝ անհատնում, հավերժական:

Բանաստեղծի սերը գերագույն անկեղծություն է և ինքնամաքրում.

Քույր իմ նաղելի, նայի՛ր քու գիմաց

Վիրավոր, ավեր սիրտըս եմ բացել...

... Ճակատիս մռայլ՝ մըշուշը ցըրի՛ր,

Եվ գուրգուրի՛ր ինձ, ես չա՛տ եմ լացել...

Եվ գերագույն վայելք ու ինքնամոռացում.

Դու՛, անուշաբույր, կախարդիչ մարմին,

Դու՛, պուրպուր գինի՛ շքեղ, դյուլթական,

Թո՛ղ քեզնով հարբիմ ու գրկի՞ք մեռնիմ. —

Վայելքը անմահ կմնա միայն...

(«Մեղքի և զղջման երգեր»)

Եվ գերագույն կարոտ ու ինքնակիզում.

Անապատում, միրաժի մեջ մի բեզվին

Շողքն է տեսնում մի աղջրկա գեղեցիկ,

Ու փնտրում է հոգեսլա՛ց, տենչադին
 Ծով – կարոտով ա՛յն ազըրկան գեղեցիկ:
 Եվ ծարավուտ անապատում հըրավառ,
 Տատասկներում, արևի տակ բոցափայլ
 Փնտրում է նա՛ նրան անվե՛րջ. անդազա՛ր
 Եվ մեռնում է վեհ սիրո մեջ հոգեզմայլ...

«Երգեր ու վերքերը» հանդրվանային գիրք հանգիսացավ Իսահակյանի համար, գիրք, որ հանրազումարի էր բերում բանաստեղծի երկու տասնամյակի ստեղծածը և ամփոփում մինչ «Աբու-Լալա-Մահարիական» շրջանի նրա պոեզիան: Մի մեծ, հասուն շրջան ավարտվում էր «Երգեր ու վերքերը»: Այն մեծ բանաստեղծի և մեծ հայրենասերի՝ բանտ ու աքսոր տեսած ազգային գործչի գիրքն էր:

«Երգեր ու վերքերում» հրատարակվեց հայոց պատմության՝ Իսահակյանի յուրովի մեկնաբանումը՝ «է՛յ, ջան հայրենիք, ինչքա՛ն սիրուն ես...» բանաստեղծությունը: Նման բանաստեղծություններով է ստեղծվում պոետի կենսագրությունը: Անհուն սերն ու անհուն ցավը ընդհանրապես բնորոշ են Իսահակյանի պոեզիային, ինչպես երգվյալ հայրենասերի անմնացորդ նվիրվածությունն ու հավատարմությունը, ինչպես ինքնազուհուության պատրաստակամությունը:

Երբ լույս տեսավ «Երգեր ու վերքերը» (1908թ.), Սասունի Սալնո ձորերում մարտերն արգեն ավարտվել էին, սակայն բանաստեղծությունը գրված էր 1900 թ.՝ ազատագրական մարտերի ամենաթեթ շրջանում: Այն ամբողջապես տոգորված էր կենաց ու մահու պայքարի ոգով:

Դեռևս Հին Հույներն էին ասում, որ ողբերգությունն է ամենավսեմ ժանրն արվեստի: Ողբերգությունն է կոփում մարդկային հոգիները, ցույց տալիս նրա էություն խորքերը: «Սալնո ձորերում, կրավի ձորերում...» բանաստեղծությունը ողբերգություն է, սեղմ ու առաքինի, սակայն լավատեսական ողբերգություն:

Հրացանը ձեռքին հայ հայդուկն իր էության մեջ վիթխարի հոգևոր ուժ է պարունակում, նա իր կյանքի վերջին վայրկյաններին, վերջին գերմարդկային պրկումներով տեսնում է այն պատկերը, հանուն ինչի նվիրաբերեց իր դեռատի կյանքը.

...Հայդուկը հոգում երազ է տեսնում,
 Հայրենի աշխարհն աղա՛տ, ապահով...

Տեսնում է... արտում հովն է շրնկշրնկում,
 Փայլուն գերանգին զընգում է անու՛շ.

Ու փոցիս են քաշում սիրուն ազըրկունք՝
 Հայդուկի վըրա երգելով անու՛շ...

Ինչքան պիտի սիրեր իր երկիրը Իսահակյանի հերոսը, որ նման երազ տեսներ, և մի՞թե հնարավոր էր ծնկի բերել մի ժողովրդի, որի զավակները այդպիսի երազներով էին աչքերը գոցում: Իսահակյանը այս բնույթի գոր-

ծերի ստեղծմամբ բարձրացրեց Հայ բանաստեղծի հեղինակությունն իր իսկ ժողովրդի աչքում: Շնորհիվ այս երկերի՝ Իսահակյանի պոեզիան դառնում է Հայ ժողովրդի յուրովի հոգևոր կենսագրությունը:

Պանդուխտ հայորդու ճակատագրին նվիրված «Օտա՛ր, ամայի՛ ճամփեքի վըրա...» բանաստեղծությունը թեև գրված էր մի ժամանակ (1903), երբ Իսահակյանը գեռ ամբողջությամբ չէր ճաշակել «պանդխտության հացը», սակայն այնպիսի դրամատիզմով էր դրված, այնպիսի կարոտով հայրենի եզերքի հանդեպ, որ որևէ ընթերցողի չէր կարող անտարբեր թողնել: Այս բանաստեղծության մեջ արդեն որոշակի արտահայտված էին այն մոտիվները, որոնք պիտի հանդիսանային Իսահակյանի գլուխգործոցի՝ «Աբու-Լալա Մահարի» պոեմի առաջնային սաղմերը:

Մեզ համար սլարգվում է այն ճշմարտությունը, որ Իսահակյանը բանաստեղծություններ ունի, որոնք կարող են պոեմի խորություն ունենալ: Այդպիսիք են՝ «է՛յ, ջան հայրենիք, ինչքա՛ն սիրուն ես...», «Որսկան ախպեր», «Սալնո ձորերում, կրովի ձորերում...», «Մայրիկիս», «Օխտը սարով հեռու՛ քեզնից...», «Արևն իջավ սարի գըլխուն...», «Ա՛խ, մեր սիրտը լիքը դարգ, ցավ...», ինչպես նաև «Օտա՛ր, ամայի՛ ճամփեքի վըրա...»: Այս գործերում ոչ թե սոսկ Իսահակյանի քնարական հերոսի, այլ հարազատ ժողովրդի ճակատագրի արգիական, կարևորագույն հարցերն են արծարծված: Նման երկերը Իսահակյանի քնարերգությունը հաղորդում են համազգային ուղղվածություն:

«Երգեր ու վերքեր» ժողովածուն եկավ ու հաստատեց նաև այն ճշմարտությունը, որ ինչքան գորեղ է Իսահակյանը որպես քնարերգու («Քուլը իմ նազելի...», «Աղբյուրի մեջ մի մարալ...», «Ալագյազի մանիներ» շարքը ե. այլն), այնքան գորեղ է և որպես փիլիսոփա: Ըստ որում, փիլիսոփա է ոչ միայն այն պատճառով, որ դրել է խորապես խոհական բանաստեղծություններ, այլ նախ և առաջ փիլիսոփա է իր մարդկային էությունը, իր մտածելակերպով: Նրա փիլիսոփայությունը ոչ թե նպատակային, դեկլարատիվ, ուսուցողական է, այլ բարդ աշխարհայացքի յուրովի արտահայտություն է, խորապես ապրված վիճակ: «Երգեր ու վերքերում» տպագրված «Իմ հոգին տարագիր մի թռչուն...», «Գերեզմանըս անհայտ լինի...», «է՛յ, դու մահվան անմահ աշխարհ...», «Ի՞նչ ես գազազում, ի՛մ վիրավոր սիրտ...», «Կյանքըս դալար ու լալագար...», «Օրըս տըրտում, սև է անցնում...», «Արարչագործ աստղի առաջ...», «Եղբայրության կամ թե սիրո...», «Անապատում, միրաժի մեջ մի բեզվին...», «Բաղերը վայրի թըռան շըվարած...», «Տիեզերական Զանգ», «Հեռու ամերում միտքըս թափանեց...», «Լսում եմ դողանջն տիեզերական», «Արևելքից մի հավք եկավ...», «Թա՛փ կուտամ թևերս և կսավառնեմ...», «Երկինքն հիասքանչ, շըքեղ, լուսեղեն...» երկերը մի միասնության մեջ ներկայացնում, ստեղծում են Իսահակյանի պոեզիայի խոհափիլիսոփայական կառույցը, և այս կառույցը տարեցտարի ավելի էր գորեղանում, համալրվում նոր գործերով, բնականաբար ոչ միայն չափածո, այլև արձակ ժանրերի և, իհարկե, «Հիշատակարան»-ի գրառումներով ու աֆորիզմներով: Մաքուր, բնածին քնարերգուն, որի մասին XX դ. ոռուս մեծագույն բանաստեղծ Ալեքսանդր Բլոկն ասել էր, որ Իսահակյանի նման թարմ ու անմիջական տաղանդ

այժմ բովանդակ Եվրոպայում չկա. միևնույն ժամանակ, մեր խորին համոզմամբ, հայ դրականության մեծագույն փիլիսոփա հեղինակներից մեկն է: Նրա տողը հագեցած է խոհով, նրա ասելիքը ինչքան որ հնչում է դասական արվեստի ոգով, այնքան և արձագանքում է խոհական ուղղվածությունը: Հանճարեղ մտքի առկայծումներն առկա են նրա ստեղծագործության բոլոր ժանրերում: Եվ սա օրինաչափ էր, քանզի Իսահակյանը, որքան բանաստեղծ է, այնքան և փիլիսոփա է:

Բանաստեղծական տաղանդը ի սպաս էր դրված ինքնարտահայտվելու, հասնելու արվեստի կատարելության, իսկ միտքը, ինտելեկտը ասլահոփում էին ասելիքի խոհական հագեցվածությունը, նպաստում գորեղ գաղափարների երևան դալուն: Ի դեպ. այստեղ չկա առաջինի կամ երկրորդի առավելությունը, այլ ամենը բնական ներդաշնակության մեջ են:

Արարչագործ աստղի առաջ

Վըշտոտ սիրտըս բացեցի.

Հավերժության աչքի առաջ

Անհույս ու խոր լացեցի. —

«Ու՞ր ես վանում մեզ երկրի հետ,

Ի՞նչն է կյանքի նրպատակ.

Ի՞նչ ես կապել մեզ նյութի հետ,

Դարձրել մահին հրպատակ»...

Իսահակյանի խոսքն ուղղված է հավիտենականությանը, դրա համար էլ միշտ արգիական է: Եվ սակայն ինչքան էլ մաքուր քնարերգության, ինտելեկտուալ պոեզիայի համագրության դասական օրինակ է Իսահակյանի ստեղծագործությունը, այնքան էլ նա մոտ է իր ժողովրդին, հարազատ է նրա մտածողությանը: Այն օգնում է մարգուն ապրել ու դիմակայել ճակատագրի հարվածներին:

1911 թ. Կոստանդնուպոլսում փոքր տպաքանակով հրատարակված «Արու-Լալա Մահարի» պոեմը (տպարան «Հերմես») չէր էլ կարող հասած լինել Հայաստան և տարիներ շարունակ այն ժողովրդի մեջ տարածվում էր ձեռագիր օրինակներով: Մեր նոր շրջանի գրականության մեջ հազիվ թե գտնվեր մի այլ ստեղծագործություն, որ ունենար նման ճակատագիր: Եվ սակայն, եթե Իսահակյանի երկերը չհրատարակեցին հայրենիքում, ապա հրատարակեցին օտար ափերում: «Արու- Լալա Մահարի» պոեմից հետո դրսում տպագրված բանաստեղծությունների առաջին գիրքը եղավ «Հայրենի աղբյուրից» ժողովածուն՝ հրատարակված Բոստոնում 1920 թ. «Հայրենիք» ամսագրի խմբագրության նախաձեռնությամբ:

1910–1920 թթ. Իսահակյանի պոեզիայում գերակայում էր բանաստեղծության խոհական հունը: Իսահակյանը գրում էր առավել սեղմ, հակիրճ, նրա նախընտրած չափը երկու — երեք քառյականոց, ավելի հազվագեպ չորս քառյականոց բանաստեղծություններ: Ասելիքի խտացումը, խոսքի հակիրճությունը Իսահակյանը համարում էր պոեզիայի առաջնային պայմաններից մեկը: Նա բացարձակ չէր ընդունում գրական շատախոսությունը, շինծու բարդությունները, գեղեցկախոսությունը, վերամբարձ ու անկյանք խոսքը, ինքնահիացումը, պսևգոմոգերն երևալը. հատկանիշներ, որոնցով տառապում էր իր ժամանակի արևմտահայ պոեզիան, և ինչը

Թմբկահարում էին որպես արժեք որոշ «պոլսահայ կրիտիկոսներ» (Ավ. Իսահակյանի խոսքերն են – Ա. Ի.):

«Հայրենի աղբյուրից» ժողովածուն գոյատևում է դասական արվեստի պոետական դաշտում: Ժողովածուն աչքի էր ընկնում լեզվական բարձր արվեստով, զարմանալի գեղեցիկ ու հնչեղ հայերենով: Իրապես տարիների ընթացքում լեզվի ասպարեզում Իսահակյանն ինքն իրեն կատարելագործում էր: Հայոց լեզուն Իսահակյանի ամենագորեղ գեներն էր: Լեզվի իսահակյանական դրացողությունը տրվում էր հազարներից մեկին, և «Հայրենի աղբյուրից» ժողովածուն հայոց լեզվի մի կատարյալ շքահանդես էր: Այս գագաթողությունն առավել էին շեշտում գրքում առաջին անգամ տեղ գտած «Մեր նախահայրերը», «Ասպետի սերը», «Հավերժական սերը» լեզուններն ու բալլադները:

Նույն դասական կատարելության աստիճանին են ժողովածուում տեղ գտած Իսահակյանի նոր բանաստեղծությունները:

«Հայրենի աղբյուրից» ժողովածուի գերիշխող մասը խոհափիլիսոփայական բնույթի բանաստեղծություններ էին: Ինչքան տարիներն առաջ էին գնում, այնքան ավելի իմաստուն էր դառնում նրա ասելիքը՝ սեղմ, հատուկ ու հստակ, և առավել դրամատիկ: Ահա այդ շրջանին բնորոշ պոետական մի խորհրդածություն.

Ո՞րտեղ է ընկած
Այն քարը հիմի,
Որ հուլիս վրա
Շիրիմ պիտ լինի:

Իմ թափառ կյանքում,
Մարգ ի՞նչ իմանա,
Չե՞մ նստել, թախծել
Այդ քարի վրա...

Ժողովածուում գետեղված էր տակավին 1911 թ. Կ. Պոլսում գրված Ա. Իսահակյանի լավագույն բանաստեղծություններից մեկը՝ «Կտեսնեմ ահա, - լուռ երեկոյին...»: Հայ և օտար դրաքննադատությունը այս երկը համարել է այն գործերից մեկը, ուր լավագույնս դրսևորված են հայ ազգային մտածողության կարևոր հատկանիշները՝ մարդասիրությունը, գթասիրությունը: Հատկանիշներ, որ ուղղակիորեն մեր ժողովրդին կասյում են քրիստոնեական գաղափարաբանության հետ: Բանաստեղծը պանդխտության մեջ հիշում է հայրենի օջախը, իր պաշտած մորը, և նրա ականջին են հասնում որդեկարոտ մոր աղոթքի խոսքերը.

«Ամենեն առաջ թո՛ղ ինքը հասնի,
Ամեն հիվանդի, հեռու՝ ճամփորդի.
Ամենեն հետո թո՛ղ ինքը հասնի
Քե՛ղ, իմ խեղճ որդի՛, իմ պանդուխտ որդի՛»:

Ի պատասխան մեր քրիստոնեապաշտ էությունը, ժամանակը հայերիս «մատուցեց» մարդկային նորագույն պատմության չտեսնված ոճերը՝ Եղեռնը: Իսահակյանը իր նամակներից մեկում (Արշակ Չոպանյանին) խոստովանել էր. «Ես այնպես խորն եմ հարվածված ու շփոթված, որ երկար

ժամանակ ինձ չսլիտի կարողանամ գտնել՝ մի ոտանավորով գոնե արտահայտել զգացածս սուգը...» (VI, 171): Եվ այդպես էլ կար, 1915–1920 թթ.՝ Իսահակյանի սակավագրության հիմնական սլաոճառը հայոց ողբերգական պատմությունն էր, թեև քնարերգությունը այն ընագավառը չէր, ուր որ սլիտի արտացոլվեին Եղեռնի արհավիրքները: Բայց և այնպես, Իսահակյանի այդ շրջանի մի շարք բանաստեղծություններում զգացվում են ազգային մեծագույն վշտի արձագանքները. «Դառն ու տրտում...», «Ցերեկվա ոսկի լույսերը մեռան...», «Հայոց գեղջուկի ծավալուն արտեր...», «Գիշեր է, քամի...», «Ահա նորեն գարուն եկավ...»: Բանաստեղծությունները հասկանալի պատճառներով դժվար էին գրվում, և Իսահակյանը առավել դատապարտեց Եղեռնն իր արձակում, հրապարակախոսական հոգվածներում, նամակներում և աֆորիզմներում: Մի տեական շրջան Իսահակյանի մարդկային էությունը, մտածողությունը, արվող քայլերը կապված էին Եղեռնի իրողություն հետ:

«Հայրենի աղբյուրից» գիրքն ուներ ընդգծված անհատական հուն, հեղինակը թե՛ ինքն իրեն, թե՛ իր շրջապատն ու իրականությունը շատ լավ էր ճանաչում, չմոռանանք, որ արդեն գրված էր «Աբու-Լալա Մահարին»: Իսահակյանը հին իմաստունների պես համոզված էր, որ մարդ ինչքան շատ իմանա, այնքան կշատանա նրա հոգսն ու տառապանքը:

Ճշմարտության, արդարության, իրավական սիրո որոնումներն այստեղ չունեին այն խանդավառ ու ոռոմանտիկ հավատը, որ հատուկ էր «Երգեր ու վերքեր»-ի (1898) և «Բանաստեղծություններ»-ի (1903) հեղինակին, բայց և չկար արդեն այն անհաշտ կիրքը, ինքնայրումն ու պայքարի տենչը, ինչը հատուկ էր «Երգեր ու վերքեր»-ի (1908) հեղինակին: Այստեղ բանականությունն էր իշխում զգացմունքի վրա, թեև բանաստեղծը գիտեր, որ «Զգացմունքն է դերիշխանը, խելքը՝ նրա լոկ ծառան», գիտեր, որ «Բախտի կռանը կամքն է թեև, բայց դիպվածն է տիրական»: Կյանքի փորձը սովորեցրել էր նրան. «Մի՛ հավատար սովերներին, հենվի՛ր միայն քեզ վրա», «Ատերու չափ սիրի՛ր մարդկանց, բայց լավություն միշտ արա՛... /Իսկ նեղ օրում ընկերների ո՛չ որոնիր, ո՛չ կանչիր»: Եվ ամենակարևորը՝ «Խաղերով լի այս աշխարհում խաղդ եթե տանուլ տաս /Զվարթ եղի՛ր ու այդպիսով բախտիդ վրա կըխնդաս»: Եվ այս ամենն իմանալով հանդերձ նա իր դեռատի որդուց միայն մի բան է խնդրում. «Լսի՛ր, տղա՛ս, ինձ կթագես, անհայտ մի տեղ, աննշան. /Որ չիմանան, մարդիկ չգան՝ չիրմիս քարը գողանան»:

«Հայրենի աղբյուրից» ժողովածուի և դրան անմիջապես հաջորդած «Աչնան ծաղիկներ» (1922) գրքի քնարական հերոսը իր կյանքի հասունությունը շրջանն էր ապրում և շատ բան աշխարհում թվում էր նրան այլ լույսի ներքո, նրա քարավանն արդեն ոչ թե իրականության, այլ երազի մեջ էր ընթանում:

Ու հեռուներից լսում էի դեռ

Անցած քարվանի դողանջը անու՛շ...

Քարավանը հուշ էր, սիրած էակը հուշ էր, հայրենիքը հուշ էր, այն գործը, որին բանաստեղծը նվիրաբերեց իր երիտասարդությունը, կյանքի լավագույն տարիները, թանձր ու մոայլ մառախուղով էր պատված, և

միայն լեռան կատարին էր լույսը ճառագում, այն էլ երազի ու երևակայության աշխարհում: Այժմ նրա քնարական հերոսը պիտի զինվեր նոր տարրերով ու լիցքերով, դա հույսն էր ու հավատը, կարոտն ու վերհուշը՝ Տարրեր, որոնք գուցեև ավելի բնորոշ են ռոմանտիկական պոեզիային և այդ շրջանի Իսահակյանի քնարական հերոսին:

Մենք սոսկ բառեր ենք արտաբերում, բայց իրականում ի՛նչ բարդ գիտություն է գուգահեռներ տանել, որսալ արձագանքներ բանաստեղծի քնարի և իրականության միջև, հետամուտ լինել բանաստեղծի խոսքին և ժողովրդի ճակատագրին: Այն ճանապարհը, որ անցնում էր Իսահակյանի բանաստեղծությունը, նրա արվեստի որակը՝ նրա խոսքը, նրա հնչյունը, նրա երանգն ինքնին նրա զորեղ անհատականության հայելին է և հայ պոետական արվեստի ամենադժվար, ամենադրամատիկ ու ամենաինքնիշխան ճանապարհներից մեկը:

Հիշենք հին իմաստունների հայտնի խոսքը, որ լիրիկան է գրականությունը ամենավսեմ ու ազնվական ճյուղը: Լինի Շեքսպիր թե Պետրարքա, Գյոթե թե Հայնե, Բայրոն թե Բյորնս, Պուշկին թե Լերմոնտով, Թումանյան թե Իսահակյան՝ նրանց քնարերգությունը, եթե կարելի է այսպես ասել, համաշխարհային պոեզիոսի ընտրանին է:

Մեծ բանաստեղծը քիչ կամ չատ չի դրում, նա ուղղակի գրում է և արդյունքում ստացվում է այն, ինչ հատուկ է միայն Պոեզիայի ընտրյալին:

Դարձյալ վերադառնանք բանաստեղծի ստեղծագործության այն շրջանին, երբ Վենետիկում լույս տեսավ Իսահակյանի խորհրդանշորեն վերնագրված «Աշնան ծաղիկներ» բանաստեղծությունների ժողովածուն: Մեր մշակույթի անցյալը վառ պահող Վենետիկի Սուրբ Ղազարի միաբանները դեռևս չէին գիտակցում, որ վենետիկյան «ճգնավորը» մեկն էր, որ մարմնավորում էր XX դ. հայ պոեզիան, որ թեև թափառական էր ու վտարանգի, սակայն նրա խոսքն էր, որ տասնամյակներ շարունակ ջրի ու հացի պես անհրաժեշտ էր լինելու իր ժողովրդին: Համաշխարհային և հայոց անցյալի բելետրիստներին հարյուրավոր շքեղ հատորներ հատկացրած մխիթարյանները երկար բանակցություններից հետո այդպես էլ գոնե մեկ գիրք Իսահակյանից չհրատարակեցին իրենց միջոցներով: Իսահակյանը ստիպված եղավ դիմել Փարիզում բնակվող Կասպից նավթահանքերի նախկին խոշոր սեփականատեր Աբրահամ Ղուկասյանցի օգնությանը, որն էլ իր հերթին տրամադրեց երեք մամուլի չափով, սահմանափակ տպաքանակով մի փոքրիկ գրքուկի գումար, որի՝ Ս. Ղազարում տպագրված լինելը հիշեցնում էր միայն կազմի վրայի դոնդուլի գողտրիկ պատկերը:

Իսահակյանը, որ երազում էր մի օր իր ուժերով երկերի ընտրանին տպագրել, ստիպված էր բավարարվել եղած հնարավորությամբ, քանզի այն է իրականը, ինչ լինում է կյանքում, այլ ոչ թե անուրջներում, ինչպես ինքն է ասել Վենետիկի Մուրադ-Ռափայելյան կղերական վարժարանում սովորող իր որդուն ուղղված «Կտակ» բանաստեղծությունում. «Ճշմարիտն ես փորձով դիտեմ ու խոսքերս մի՛ մոռնար: /Կյանքն է ամպի փախչող ստվեր, վայրկյանն է միշտ իրական/, իսկ նեղ օրում ընկերների ո՛չ որոնիր, ո՛չ կանչիր»:

Տպագրատունն ի Սուրբ Ղազար – Վենետիկում հրատարակած իսահակյանական հատորը թեև վերնագրված էր «Աշնան ծաղիկներ», սակայն լույս տեսավ 1922 թ. գարնանը, ինչը խորհրդանշական էր. աշունը գեռ հեռու էր, բանաստեղծը 47 տարեկան էր և գա կյանքի հասուն ու բեղմնավոր շրջան էր: Պատահական չէ, որ նույն այդ թվականին պետք է գրվեր «Լիլիթը» երկրային կրքով երկնային սիրո մասին լեգենդը:

«Աշնան ծաղիկները» պարունակում էր շուրջ 30 բանաստեղծություն, որոնք իսահակյանի գրքում զետեղվում էին առաջին անգամ: Սա ևս վերջին 10 – 12 տարիների իսահակյանի քնարերգություն մի գողտրիկ հավաքածու էր: Գիրքը պարուրված էր մոտալուտ աշնան նախադասացումով, մի տեսակ ներքին տխրություն, անցած օրերի թախիծի զգացումով.

Զմրուխտյա երգե՛ր, երազնե՛ր շքեղ,
Գարնան վարդի հետ եկա՛ն, գնացի՛ն,
Համբու՛յր ծաղկաբու՛յր և սե՛ր հրաշագեղ
Գարնան սյուքի հետ եկա՛ն, գնացի՛ն...
... Եվ հիմա աշնան մեգի մեջ խավար՝
Ականջըդ դրած սրտիդ լուռ լացին՝
Օտար ավերում կանգնել ես շվար,—
Ինչ որ ունեիր անդա՛րձ գնացին...

Գրքում գերիշխողը երկու-երեք քառյականոց բանաստեղծությունն էր, իսահակյանը տարիների հետ առավել սեղմ ու խտացված էր գրում, փոքր կտավի բանաստեղծությունը նրա նախասիրությունն էր:

Այս հատորը, կամ ինչպես իսահակյանն էր ասել գրքի վերջին էջում՝ հատորիկը, շատ միասնական էր, համակված բացառիկ քնարական տրամագրությամբ: Այսօր «Աշնան ծաղիկներից» շատ քիչ օրինակներ են մնացել, երբ նայում ես նրա բարձրաճաշակ ձևավորված կադմին, թվում է, թե գիրքը, ինչպես կադմի գոնդոլը, կգնա, կանհետանա վենետիկյան ծովախորշի մշուշների մեջ...

«Աշնան ծաղիկները» տրամադրության գիրք է, առավել իշխողն այստեղ սիրո զգացմունքն է, սիրո հիշատակի մրմունջը, անմեկին զգացմունքի ծփանքը, սիրո կարոան ու հմայքը:

Բայց և այնպես, «Աշնան ծաղիկները» միայնակ նավարկող գոնգոլ չէր, ժամանակի վիշտն ու տագնապը, ինչպես միշտ, այժմ էլ իր կնիքը թողել էր պոետի ձեռագրի վրա: Հենց Վենետիկում է գրված «Մեղեգիներով գարունն է փթթել...» բանաստեղծությունը, ուր վենետիկյան փարթամ գարնանը, հայացքը անգործիկ ծովին, իսահակյանը մտորում է.

... Կարծե՛ս գաշտերը թուխպը չի պատել,
Ձի կախվել ծառից մահադու՛յն տերև:
... Կարծե՛ս աշխարհում չի թափվել արյուն,
Ձի եղել երբեք լաց ու կոտորած...

«Աշնան ծաղիկներ»-ում առաջին անգամ տպագրվեց հայոց Եղեռնը հիշատակող իսահակյանի ամենատխուր երկերից մեկը.

Ձյունն է եկել ծածկել հիմա
Ճեղմա՛կ, ճերմա՛կ խաղաղություն
Դաշտեր, գյուղեր տխուր, ավեր

Հայրենիքիս...

Անհուն, անծիր տառապանքով,

Ջարհուրանքով, եղեռններով

Հաղար ու բյուր, հաղար ու բյուր...

«Աչնան ծաղիկներ»-ում կրկին հնչեց Իսահակյանին այնքան սրտամոտ և այնքան պոետական բարձունքներ նվաճած մայրական սիրո թեման: Եվ դա խորապես հասկանալի էր, գիրքը ստեղծվել էր մոր վախճանից անմիջապես հետո: Եվ մոր՝ Ալմաստի լուսավոր կերպարը ներկա էր բանաստեղծի բազում երկերում:

«Աչնան ծաղիկներ» գիրքը պարունակում էր հայրենիքում չլինելու, չապրելու թախիծով: Այն հայելու պես ցույց էր տալիս Իսահակյանի հոգեվիճակը, երբ նա իր շուրջն ամեն ինչ տեսնում էր մոայլ գույներով, մշուշի մեջ: Իսկ կյանքը անժպիտ ու հին երազի հետզհետե խլացող արձագանքն էր և միայն մի լուսավոր կետ կար հոգում, այն էլ երևան էր գալիս սոսկ երազներում:

Իսահակյանն այլևս չէր կարող ապրել առանց հայրենիքի, և այս դիրքն էլ եղավ նրա հայրենիք վերադառնալու որոշման, հոգեկան դրզիչ պատճառների լավագույն արտացոլումը: «Աչնան ծաղիկները» նաև հրաժեշտ էր Եվրոպային, բանաստեղծի կյանքի մի տևական, բարդ շրջանի, որը հետագայում այնպես շոյալ ու տաղանդավոր լուսաբանվեց բանաստեղծի որդու՝ Վիդեն Իսահակյանի «Հայրս» հուշերի գրքում:

Իսահակյանի քնարերգության լավագույն երկերը, ի թիվս նրա 1920–1930 թթ. գրած բազմաթիվ գործերի, պոետի բժախնդիր ընտրությունները համախմբվեցին և կազմեցին մի կուռ հատոր՝ «Բանաստեղծություններ» խորագրով: Ժողովածուն լույս տեսավ Երևանում (Պետհրատ) 1930 թ. Մարտիրոս Սարյանի սքանչելի կաղամպատկերով, Սարյանի և Թերլեմեզյանի պոետի երկու դիմանկարներով և իր ժամանակի համար հազվագեյ 5000 տպաքանակով: Երկար, շատ երկար սպասումից հետո Իսահակյանը կրկին տպագրվում էր հայրենի երկրում, և նրա ստեղծագործությունը վերադարձվում էր ժողովրդին:

Բացառություն կազմեց «Աբու-Լալա Մահարի» պոեմը, որի տպագրությունը գրքի չափազանց աչալուրջ խմբագիրները և «վերին ատյանները» համարեցին անհարիր: Այս գիրքն ապացույցն էր այն բանի, որ տարիների հետ ափելի հղկվում և բյուրեղանում էր Իսահակյանական ոճը: «Բանաստեղծություններ» գրքում առաջին անգամ հրատարակվեց «Ռավեննայում» բանաստեղծությունը (գրված 1926 թ. Վենետիկում)՝ Իսահակյանի լիրիկայի մարգարիտը: Քնարերգությունն այն բնագավառն է, ուր, հիրավի, լավագույնս են դրսևորվում թե՛ հեղինակի անհատականությունը, թե՛ նրա պոետական արվեստի հնարավորությունները: Քնարերգությունը դրականության ազնվական ճյուղն է, այն կապված է ոչ միայն ստեղծագործողի մտածողության և գրելաձևի հետ, այլ ուղղակի կապի մեջ է նրա տաղանդի հետ: Գրական շատ ժանրերի կարելի է տեսական-քննական բացատրություն տալ: Մինչդեռ բարձրարվեստ քնարական բանաստեղծությունը ամենադժվարին մեկնաբանվող, բացահայտվող երևույթն է, քանզի այն է, որ բոլորից շատ է կապված պոետական արվեստի (ars

poetica) հրաշքի հետ: Իսահակյանի բանաստեղծական հանճարի դրսևորման, հիրավի, լավագույն օրինակը կարելի է համարել «Ռավեննայում» բանաստեղծությունը, որը խտացրել է այն ամենն, ինչը կարող է կոչվել հայ քնարերգության իսահակյանական ոճ.

Արարատի ծեր կատարին
Դար է եկել, վայրկյանի պես,
Ու անցել:

Անհուն թվով կայծակների
Սուրն է բեկվել ազամանգին,
Ու անցել:

Մահախուճապ սերունդների
Աչքն է գիպել լույս գազաթին,
Ու անցել:

Հերթը հիմա քոնն է մի պահ.
Դու էլ նայիր սեգ ճակատին,
Ու անցիր...

Ավելի էր թեժացել կարոտը հայրենի եղերքի հանդեպ, և հենց այդ շրջանում գրվեցին «Հայաստանին», «Հայրենի ծուխը», «Հայրենիքիս» («Ակութներից հին հայրենի...»), «Հայրենիքիս» («Պիտի փարվիմ չքնաղ լանջիդ...»), «Ոտք եմ գնում հայրենական հարկը հին...», «Հայրենիքիս» («Ցորենի ծրփուն արտերի եղրին...») բանաստեղծությունները:

«Հայաստանին» բանաստեղծությունը՝ գրված 1921 թ., մի ամփոփ խորհրդածություն է հայրենիքի անցյալի և ապագայի վերաբերյալ, և երկն ամբողջությամբ հնչում է որպես աղգային օրհներգ: Այս երկը կարելի է նաև համարել Իսահակյանի պատասխանն այն «կրիտիկոսներին» ու սնափառ տեսաբաններին, որոնք մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների բերումով ի զորու չէին, անկարող էին ունկնդրել նրա հանճարեղ քնարին և գեո ջանում էին Իսահակյանին «մեղադրել» աշուղականության ու պարզունակության մեջ.

Արգարախոս ու մեծաքանչ քո հին լեղվով օրհներգված,
Լուսավորչի լույս կանթեղով երկինքները գ լուսերանգված,
Անճառելի ու դաբերի տանջանքներով հոգիացած,
Հրրաշափառ քո Հարությունը՝ նորամանուկ ի մ Հայաստան:
Իսահակյանը կարող էր գրչի մեկ հարվածով խոսել դարերի հետ.
Վա՛ռ ու հղո՛ր քո ապագան
Կայծակում է իմ դեմ.
Դու՛, հավերժող իմ Հայաստան,
Անուն քա՛ղցր ու վսե՛մ...

Եվ կամ թե հայտնաբերել հայերեն տառի հնչյունայնության աներևակայելի հնարավորությունները.

Խաժամուժ, խուժան՝ անծայր, անքանակ,
 'Իարեր խուժում են – խժողուժ, խոլարչավ,
 Ճըչում խժածայն, դնում են բանակ
 Քո ցորենաչատ դաշտերում անբավ...

Բանաստեղծական արվեստի այն դասական կատարելութանը, որին հասել էր Իսահակյանը, բացարձակ աստիճանն էր: Կա հասկացություն՝ «Հանճարը պարզություն մեջ է», կա և դարձվածք՝ «Տողի պուշկինյան թեթևություն», ահա այս հասկացությունների քրեստոմատիկ օրինակը կարող է հանդիսանալ Իսահակյանի հետևյալ քառատողը.

Ասում են, թե՛ դու այնպես
 Մոռացել ես ինձ այնպես,
 Որ երբ անունս են տալիս,
 Հաղիվ միտքդ եմ գալիս...

Տարիները կատարելագործում են բանաստեղծի ձեռագիրը, ավելի ու ավելի իմաստավորում նրա խոսքը: Թերթում ես «Բանաստեղծություններ» հատորը և մտորում. կատարյալն ունի՞ արդյոք սահման:

«Բանաստեղծություններ» գիրքը մեծ դեր խաղաց Իսահակյանի ստեղծագործական կյանքում: Երկարամյա ընդմիջումից հետո նրա գրքերը կրկին վերադարձվեցին իսկական տիրոջը՝ հարազատ ժողովրդին: Եվ վերադարձվեցին ընդմիջտ: Ճիշտ է, վերջին գրքերում արդեն քիչ էին նոր բանաստեղծությունները, սակայն կարևորն այն էր, որ նրանք կային, նրանք վկայում էին, որ ի հեճուկս առաջացած տարիքի, խոսքի ազատության սահմանափակումների, խորհրդային պատմության շա՛տ և շա՛տ ծանր իրադարձությունների՝ 1937 թ., Հայրենական մեծ պատերազմ, 1949 թ.՝ աքսոր, անհատի պաշտամունք և այլն, և այլն...

Իայց և այնպես Իսահակյանը շարունակում էր դրել և տպագրվել, ճիշտ է ոչ այն հաճախականությամբ, որ հասցնում էին իրենց գրքերը հրապարակ հանել բանաստեղծական համաքարության նոր, եռանդուն ներկայացուցիչները, սակայն Իսահակյանի գրքերից յուրաքանչյուրը մի կատարյալ երևույթ էր դառնում:

Ոգևորված «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի համաժողովրդական տոնակատարությամբ, որի նմանը հիրավի հայոց հողի վրա չէր եղել, Իսահակյանը գրում է «Մեր պատմիչները և մեր գուսանները» բանաստեղծությունը՝ մեր պատմության տարաբևեռ ընկալումը հայ պատմիչների և հայ գուսանների կողմից, այդ պատմումների համադրումը վերստեղծում է մեր անցյալ ճանապարհի ճշմարիտ պատկերը:

Հայրենասիրական ջիղը Իսահակյանի պոեզիայում տարիների ընթացքում ավելի էր թանձրանում, զորեղանում: Նա, որ պաշտամունք ուներ «Սասնա ծռեր» ազգային էպոսի հանդեպ, որ դրել էր իր էպոսատիպ ասքը՝ «Մասսա Մանուկ» սլոնը և մշակել էպոսի ճյուղերից մեկը, Դավթի կրտսեր որդի Մհերի մասին «Սասնա Մհեր» պոեմը, նա, որ գրել էր հայագիտական լավագույն ուսումնասիրություններից մեկը՝ «Փորձ մեր էպոսի գիցաբանության մասին», հանձինս ազգային էպոսի տեսնում էր մի միջնաբերդ, որը թույլ չէր տա ժողովրդին կարկամել, հոգեպես ընկճվել ու տարանջատվել այն պատմական իրավիճակում, որ ստեղծվել էր 1937–

1938 թթ. արհավիրքներից հետո, իսկ դիմացը մոտալուտ դաժան աշխարհամարտն էր: Հայրենասիրության պոռթկումը, հանձինս ազգային էպոսի 1000-ամյակի տոնակատարության, հավատ ներշնչեց ժողովրդին սեփական ուժերի հանդեպ, հարգանք հարուցեց անցյալի պատմության և մշակույթի հանդեպ:

Հպարտությունն անցյալի պատմության հանդեպ հայրենասիրական վերելքի ճանապարհ էր բացում ու հավատ էր ներշնչում ժողովրդին: Այս գաղափարաբանության խտացումն էր Իսահակյանի «Մեր պատմիչները և մեր գուսանները» բանաստեղծությունը.

... Գուսանները մեր խանդավառ, առջևները դինի և հաց,
Վիպերգեցին հաղթանակը դյուցազնների մեր մեծագուր
Եվ ծաղրեցին պարտությունը ոստիների մեր բյուրավոր:
Եվ հյուսեցին պատմությունը հավերժացող ժողովուրդի,
Վառ հավատով փառքերը մեր ավանդեցին որդոց որդի.
Տեսան շքեղ մեր ապադան, անրնկճելի ազատ ոգին...

Երբ լույս են տեսնում նման բանաստեղծություններ, իսկ Ընտիր երկերի երկրորդ հատորում՝ «Աբու-Լալա Մահարի» պոեմը, Իսահակյանը չէր կարող չունենալ հոգեկան բերկրանքի պահեր: Կարելի՞ է արդյոք որոշել երջանկության այն աստիճանը, երբ հեղինակը գրում է, թե ի՞նչ սիրով է ժողովուրդը ընկալում իր երկերը և մեծարում իրեն համաժողովրդական հարգանքն արտահայտող մի բառով՝ Վարպետ:

Այս շրջանում Իսահակյանը դեռևս ինքն էր կազմում իր գրքերի տեքստերը և հետևում դրանց հրատարակության ընթացքին: Ընտրանու երկու հատորներից հետո երևանում 1943 թ. հրատարակվեց Իսահակյանի բանաստեղծությունների Հատընտիրը: Թեև պահը շատ դրամատիկ էր, պատերազմի բեկումնային տարին էր, սակայն հենց նման շրջանում է առավել զգացվում մեծ պոեզիայի կարիքը: Գիրքը հոյակապ նվեր էր բազում զրկանքներ կրող, բայց և արիաբար այդ զրկանքներին դիմակայող մեր ժողովրդին: Այս ժողովածուում բանաստեղծությունները, ի տարբերություն նախորդ գրքերի, ներկայացված էին ժամանակագրական կարգով: Այնուհետև այս կարգը կկիրառվի հետագա բոլոր ժողովածուներում: Առաջին անգամ Վարպետի պատերազմական շրջանի հատորում լույս տեսան այնպիսի նշանակալից պոետական գործեր, ինչպես՝ «Հայրենիքիս» («Ցորենի ծրփուն արտերի եզրին...»), «Ա՛խ, երանի չծնվեի...», «Նոր տարվա առավոտյան», «Ողջունյն ամենքին», «Ամառվա կապույտ անդորր գիշերին...», «Բինգյոլ», «Թագմակոչ», «Հայ ճարտարապետությունը»:

Հայրենի հողը, հայրենի բնությունը, Արարատը, Արագածը, Սևանը, էջմիածինը հոգեկան վիթխարի ուժ էին ներշնչում աշխարհի բազում ու բազում ճամփաներ անցած, սակայն այդպես էլ անդորր ու երջանկություն չգտած բանաստեղծին: Այլ էր հայրենիքը, հայրենի շունչն ու ոգին, հայրենի լեռներն ու աղբյուրները մի առանձին իմաստ էին տալիս նրա քնարին: Իսահակյանը ողջ կյանքում առանձնահատուկ պաշտամունք ուներ Աևանա լճի և կղզու հանդեպ, իր լավագույն ստեղծագործություններից մեկը նա անվանել էր «Կապուտաչյա գեղեցկուհին»:

Այո՞, Իսահակյանը գտել էր հոգեկան այն հանդիստը, այն ներգաշնակութունը, որ որոնել էր մշտապես և սակայն դրա համար մի ողջ կյանք էր պետք: Բանաստեղծը և Սևանա լիճը իրար շատ էին նման թե՛ խորհրդավորութամբ, թե՛ ճակատագրերով... Այն հազվագյուտ երանավետ պահերը, որ զգացել է ալեզարգ բանաստեղծը կյանքի արևամուտին, հաճախ կապված են եղել Սևանա կղզու հետ: Սևանի ջրերի հարևանութամբ է նա կերտել իր պոեզիայի հրաշալիքներից մեկը՝ «Բինգյուլը»: Կարո՞տն էր այն գերության մեջ մնացած հայրենի սարերի ու լճերի հանդեպ, իր այդպես էլ չվայելած սիրո հանդեպ, թե՞ գարնան խինդն ու եզակի բույրը, որ դալիս էր Սևանա կղզու խոտերից ու ծաղիկներից, այն խենթացնող հովը, որ իրեն Բինգյուլն էր հիշեցնում.

Երբ բաց եղան գարնան կանաչ դռները,
Քնար դառան աղբյուրները Բինգյուլի.
Շարվե շարան անցան զուգված ուղտերը,
Յարս էլ գնաց յայլանները Բինգյուլի:

... Մոլորվել եմ, ճամփաներին ծանոթ չեմ,
Բյուր լճերին, գետ ու քարին ծանոթ չեմ.
Ես պանդուխտ եմ, էս տեղերին ծանոթ չեմ,
Քուլրիկ, ասա, ո՞րն է ճամփան Բինգյուլի:

«Բինգյուլ» վերնագրով բանաստեղծությունն՝ «Շընկչընկալով հովն է վիրչում/Ձով Բինգյուլի լանջերից...», Իսահակյանը գրել էր 1893 թ., իր պատանեկության շեմին և տպագրել «Երգեր ու վերքերում» (1898): Թեև անցել էր կես դար, մի ողջ կյանք, բայց Իսահակյանի քնարը ասես նույնն էր մնացել, նույն ներշնչանքը, խինդը, կիրքը, թափը: Չնայած բանաստեղծը ասում էր. «Ինձ ի՞նչ, ավա՛ղ, բլբուլները Բինգյուլի...», սակայն հենց նրա համար էին «բլբուլները Բինգյուլի»: Ապա թե ոչ կգրվե՞ր արդյոք 66 տարեկանում «Բինգյուլի» նման բանաստեղծական հրաշալիքը: Պատահական չէ, որ այս բանաստեղծության հետ էլ նույն հրաշքը տեղի ունեցավ, ինչ Իսահակյանի քնարերգության բազում երկերի հետ. երբ դեռ ձեռագրի թանաքը չչորացած՝ ժողովուրդն այն առանց որևէ միջնորդի «սեփականաշնորհեց», այսինքն՝ երգի վերածեց:

«Երաժշտությունը ժողովրդական» բնորոշումը եղել է Իսահակյանի պոեզիայի մշտական ուղեկիցը, իսկ «Բինգյուլը» երգի վերածված նրա վերջին երկը եղավ:

Եվ սակայն մենք գիտենք, որ Հայրենական պատերազմի դաշտերում հայ զինվորը երգել է «Որսկան ախպերը»: Ժողովուրդը Իսահակյանի պոեզիային վերաբերվել է ինչպես իր ստեղծածին, այնպես, ինչպես վերաբերվել է «Նարեկին», Սասնա ֆայսին, բանահյուսական երգերին ու հեքիաթներին: Սա բարձրագույն դնահատականն է, որ կարող է տրվել գրականության դասական ստեղծագործությունը:

Իսահակյանի Երկերի առաջին բազմահատոր ժողովածուն (4 հատորով) լույս տեսավ 1950 – 1951թթ.: Առաջին հատորն ամբողջութամբ հատկացված էր բանաստեղծություններին, այն Իսահակյանի քնարերգության ամենաընդգրկուն հավաքածուն էր (322 էջ), որի բնագրերը կազմվել էին

Հեղինակի մասնակցությունը: Հատորի բանաստեղծությունների մի մասը ծանոթագրված էին, բերված էին նաև նրանց բնագրային տարբերակները. այս աշխատանքը կատարել էր գրականագետ Արամ Ինճիկյանը:

Իսահակյանը, որն այնքան մեծ նշանակություն էր տալիս իր յուրաքանչյուր բանաստեղծության տողին ու բառին, այս հրատարակության համար բազմաթիվ երկեր նորից ենթարկել էր մշակման, խմբագրել: Այնպես որ հատորը կարելի է համարել Իսահակյանի չափածոյի լավագույն գրքերից մեկը: Թերթելիս այն կարծես զգում ես Իսահակյանի ձեռքերի ջերմությունը, նրա շունչը, ճաշակը: Գիրքը, իրապես, Իսահակյանի բանաստեղծական ուղու ամփոփումն էր, մնայուն մի կոթող:

Հայ ընթերցողը գիտի, որ Իսահակյանը պաշտամունք ուներ գրքի հանդեպ: Որքան էլ մեծ լիներ նրա անունը և փառքը, սակայն նա միշտ էլ մեծագույն պատասխանատվությամբ է մոտեցել իր գրքերին (խոսքը այն գրքերի մասին է, որոնք տպագրվել են իր հայացքի ներքո)՝ գիտակցելով, որ գիրքը դարերի համար է: Գուցե այս է պատճառը, որ նա իր մեծ կյանքի ընթացքում համեմատաբար քիչ է հրատարակվել:

1955 թ., բանաստեղծի 80-ամյակի նախօրեին, երբ լույս տեսավ Իսահակյանի Երկերի մեծագիր մեկհատորյակը, Վարպետն իրապես ապրեց հոգեկան բերկրանքի պահեր, ժողովածուն նրա ողջ ստեղծագործության յուրօրինակ հատընտիրն էր, երկար սպասված գիրք: Գրքի բնագրերը կազմել էր Արամ Ինճիկյանը, սակայն բանաստեղծությունների բաժինը արված էր Վարպետի անմիջական մասնակցությամբ: Նա, չնայած այնքան տպագրված ու հայտնի գործերին, արել էր մի շարք նոր խմբագրումներ ու հղկումներ: Հորեղյանական մեկհատորյակը հանդիսացավ Իսահակյանի կենդանության օրոք տպագրված վերջին գիրքը, ուստի և այն համարվում է բանաստեղծի վերջին կամքի արտահայտությունը:

Այդ հատորում, ի թիվս բազմաթիվ հայտնի գործերի, գետեղված էին նաև տարբեր տարիներին գրված մի շարք բանաստեղծություններ, որոնք առաջին անգամ էին լույս տեսնում՝ «Լուսնակ գիշեր, լույս ուրու...», «Ոտք եմ դնում հայրենական հարկը հին...», «Երագիս մեջ Անին տեսա...», «Ա՛խ, մի անգամ ոսկետերև աշունքին...», «Ամեն ինչ ունայն, երազ անցավոր...», «Ավիկին»:

Վերջին գործը յուրովի բանաստեղծական կտակն էր՝ ուղղված թոռանը և նրա միջոցով՝ նոր սերնդին: Բայց ամենից առաջ սա հայրենասիրական պատգամ էր. հայրենասիրություն՝ ահա Իսահակյանի ստեղծագործության սուրբ սրբոցը.

...Անգավաճան, անհուն սիրով

Հայրենիքիդ լինես պաշտպան.

Եթե նրա սիրո համար

Մի սիրալի գործ կատարես —

Չըհոխորտաս, լինես խոնարհ:

Եվ իր պարտքը ճիշտ կատարած

Մարդու նման՝ խիղճդ անդորր,

Ապրես ուրախ ու բախտավոր...

Պոեզիայի մեջ անմահության գուռը հասած բանաստեղծը գիտակցում է, որ ինքը գուտ մարդկայնորեն էլ անմահ է հանձինս իր շառավղի: Ուստի, իր վերջին համեստ, բայց և խորիմաստ պատվիրանն է թողնում նրան.

Եվ մեն-մենակ, տարին մի օր
Այցի ելնես մամռոտ շիրմիս,
Կանգնես լռիկ, խորհես մի պահ,
Իմ կաթողին սիրած տղա:

Իսահակյանի բանաստեղծության միասնականությունը, խոհափրիխոփիայական ուղղվածությունը, մտածելակերպի ժողովրդայնությունը, լեզվի շքեղությունը և պոետական արվեստի կատարելությունը մի բացառիկ երևույթ է, և այն հայ ժողովրդի, հայ մշակույթի անանց հպարտությունն է:

СТИХОТВОРЕНИЕ АВЕТИКА ИСААКЯНА

АВИК ИСААКЯН

Р е з ю м е

Аветик Исаакян творческую деятельность начал созданием стихотворений. Писать стихотворения он начал очень рано, с 10-12 лет. В 1898 г. вышла первая книга поэтических произведений Исаакяна "Песни и раны", принесшая молодому поэту всенародную известность. Стихи Исаакяна стали печататься во многих армянских периодических изданиях. В 1902 г. вышел в свет второй поэтический сборник Исаакяна "Из новых песен и ран", а в 1903 г. — "Стихотворения". Этими изданиями Исаакян уже в начале века становится одним из известнейших поэтов Армении. Своим поэтическим циклом "Песни гайдука" он первым привносит в классическую армянскую поэзию мотивы народно-освободительной борьбы против турецкой деспотии. В 1908 г. в Тифлисе выходит итоговый сборник поэтических произведений Исаакяна "Песни и раны". Преданность этому заглавию подчеркивает идею, что Исаакян верен своим основным поэтическим темам и мотивам; его поэтические творения с годами больше приобретают мастерство и утонченность. Стихотворения Исаакяна становятся одним из высших достижений поэзии Армении. Ему было присуще глубинное понимание судьбы, мышления и характера родного народа. Его стихи — эта душевная песнь самого народа, возвышенная в совершенные формы поэтического искусства. В статье обстоятельно изучаются все поэтические сборники Исаакяна, изданные при жизни поэта, рассматривается эволюция его творчества, а также основные идеи стихотворных творений. Подробно рассматриваются проблемы стиля и авторского мастерства.